ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՄԱԶԾ-ԳԷՀ «ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնվենցիայի ներքո Հայաստանի չորրորդ ազգային հաղորդագրության և երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի պատրաստում» ծրագրի շրջանակներում մշակված ջերմոցային գազերի մարդածին արտանետումների 2015թ. և 2016թ. ազգային կադաստրի հաշվետվության նախագծի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

N	Դիտողության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Դիտողության, առաջարկության բովանդակությունը	Պարզաբանում	Կատարված փոփոխությունները
1	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն 22.02.2019թ. N01ԳԲ/22.1ՀԲ/1044	Դիտողություններ և առաջարկություններ չունի		
2	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ 04.03.2019թ. N02-24/1021	Բնական գազի տվյալների մասով առարկություններ չկան՝ բացառությամբ 2-րդ հավելվածի Հ.1 աղյուսակում բացակայում են սյունակների անվանումները	Սյունակների անվանումները առկա են	
3	Գյուղատնտեսության նախարարություն 21.02.2019թ. ՈԳՊ/ԱԲ-2/770	Առարկություններ և առաջարկություններ չունի		
4	Պետական եկամուտների կոմիտեի 06.03.2019թ. N06/3-4/12900	Առաջարկություններ չունի		

5	Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 19.02.2019թ. N03/10.1/1881	Առարկություններ և առաջարկություններ չունի		
6	Վիճակագրական կոմիտեի 25.02.2019թ. ՈԵ/295	• Աղյուսակ 7.1-ում՝ «Առաջնային էներգիայի ընդհանուր մատակարարում», ատոմային էներգիայի մասնաբաժինը տարբերվում է ՀՀ ՎԿ կողմից հրապարակված էներգետիկ հաշվեկշռում ատոմային էներգիայի մասնաբաժնից: • Աղյուսակ 7.1-ում՝ «Առաջնային էներգիայի ընդհանուր մատակարարում», կենսա–	• Առաջնային էներգիայի ընդհանուր մատակարարման կառուցվածքում (Աղյուսակ 7.1) ատոմային էներգիայի մասնաբաժինը հաշվարկվել է ըստ ատոմակայանի էլեկտրաէներգիայի արտադրության և արդյունավետության, ինչպես որ դա հաշվարկվել է բոլոր նախորդ տարիների համար, մինչդեռ 2016թ. էներգետիկ հաշվեկշռում ատոմային էներգիայի մասնաբաժինը հաշվարկվել է պայմանական վառելիքի ծախսով: • Առաջնային էներգիայի ընդհանուր մատակարարման կառուցվածքում (Աղյուսակ 7.1)	• Ատոմային էներգիայի մասնաբաժինը բոլոր տարիների համար՝ հաշվի առնելով ժամանակային շարքերի համադրելիության ապահովման անհրաժեշտությունը, վերահաշվարկվել է ըստ պայմանական վառելիքի ծախսի՝ ՀԱԷԿ-ի կողմից տրամադրված պաշտոնական տվյալների հիման վրա (ՀԱԷԿ-ի N Ե/32/927-19 առ 18.04.2019 գրություն, ի պատասխան ՀՀ «Էներգետիկայի ԳՀԻ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն պրն. Ռ. Եղոյանի հարցմանը. Տեղեկանք՝ պայմանական վառելիքի ծախսը 2000-2015թթ. համար):

		զանգվածի մասնաբաժինը տարբերվում է ՀՀ ՎԿ կողմից հրապարակված էներգետիկ հաշվեկշռում կենսազանգվածի մասնաբաժնից: • ք.Երևանի մշտական բնակչության թվաքանակը 2000-2011թթ.-ի միջակայքում նվազել է 3.4 %-ով, իսկ աճ է արձանագրվել սկսած 2012թ.-ից:	կենսազանգվածի մասնաբաժինը հաշվարկվել է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված պաշտոնական տվյալների հիման վրա: • Սեկտորի արտանետումների աճի պատճառը 2000-2016թթ. ժամանակահատվածում հստակ չէ:	• «Թափոններ» բաժինը վերախմբագրվել է՝ 2000-2016թթ. ժամանակահատվածում սեկտորի արտանետումների աճի պատճառը հստակեցնելու համար, այն է. աճը պայմանավորված է անաէրոբ պայմաններում օրգանական նյութերի քայքայման պրոցեսի մեծ ներտությամբ և կուտակային էֆեկտով: